Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Հորդորել նրանց աղոթել

Երբ ես փոքր երեխա էի, իմ ծնողները իրենց օրինակով ինձ սովորեցրել էին աղոթել: Ես սկսեցի աղոթել՝ իմ մտքում ունենալով հեռվում գտնվող Երկնային Հոր պատկերը: Մեծանալու ընթացքում աղոթքի հետ կապված իմ փորձառությունը փոխվեց: Իմ պատկերացման մեջ Երկնային Հայրը դարձավ մեկը, ով մոտ է ինձ, ով ողողված է պայծառ լույսով և ով կատարելապես ճանաչում է ինձ:

Այդ փոփոխությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ ես հաստատուն վկայություն ձեռք բերեցի այն մասին, որ 1820թ. Մանչեսթերում, Նյու Յորք, Ջոզեֆ Սմիթի փորձառության զեկույցը ճշմարիտ է.

«Ես տեսա արևի պայծառությունը գերազանցող լույսի մի սյուն, որն աստիճանաբար իջնում էր ցած, մինչև որ ընկավ ինձ վրա:

. . . Երբ լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր:Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան:*» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16-17):

Երկնային Հայրը պուրակում էր այդ գեղեցիկ գարնանային օրը: Նա կանչեց Ջոզեֆին անունով: Եվ Նա ներկայացրեց աշխարհի հարություն առած Փրկչին որպես Իր «Սիրելի Որդի»: Երբ և որտեղ էլ դուք աղոթեք, այդ փառահեղ փորձառության իրականության ձեր վկայությունը կարող է ձեզ օրհնել:

Հայրը, որին մենք աղոթում ենք, փառահեղ Աստվածն է, ով արարել է աշխարհներ Իր Սիրելի Որդու միջոցով: Նա լսում է մեր աղոթքները, ինչպես լսեց Ջոզեֆի աղոթքը՝ այնպես պարզ, կարծես դրանք ասված լինեն Նրա ներկայությամբ: Նա բավականաչափ սիրում է մեզ, դրա համար էլ Նա տվեց Իր Որդուն որպես մեր Փրկիչ: Այդ պարգևի շնորհիվ Նա հնարավոր դարձրեց մեզ համար ձեռք բերել անմահություն և հավերժական կյանք: Եվ Նա Իր Որդու անունով աղոթելու միջոցով մեզ հնարավորություն է տալիս շփվել Իր հետ այս կյանքում այնքան հաճախ, որքան որ մենք կընտրենք:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում քահանայություն կրողները սուրբ պարտականություն ունեն «այցելել յուրաքանչյուր անդամի տուն և *հորդորել նրանց, որ աղոթեն բարձրաձայն և գաղտնի*» (ՎԿՈՒ 20.47, շեշտադրումն ավելացված է):

Շատ ձևեր կան, որոնցով կարող ենք հորդորել ինչ-որ մեկին աղոթել: Օրինակ, մենք կարող ենք վկայել, որ Աստված պատվիրել է մեզ միշտ աղոթել, կամ մենք կարող ենք նկարագրել օրհնությունների

օրինակներ սուրբ գրություններից և մեր սեփական փորձառությունից, որոնք գալիս են երախտագիտության, աղերսանքի կամ խնդրանքի աղոթքներից: Օրինակ, ես կարող եմ վկայել, որ ես գիտեմ, որ Երկնային Հայրը պատասխանում է աղոթքներին: Ես ստացել եմ ուղղություն և մխիթարություն՝ բառերի միջոցով, որոնք եկել են իմ մտքում, և ես գիտեմ Հոգով, որ այդ բառերը Աստծուց էին:

Ջոզեֆ Սմիթն ունեցել է այսպիսի փորձառություններ և, ուստի, դուք էլ կարող եք: Նա ստացավ այս պատասխանը անկեղծ աղոթքով.

«Որդիս, խաղաղություն քո հոգուն. քո ձախորդությունն ու քո չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ.

Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի» (ՎԱՈՒ 121.7-8):

Դա հայտնություն էր սիրող Հորից հավատարիմ որդուն, որը մեծ վշտի մեջ էր: Աստծո յուրաքանչյուր զավակ կարող է հաղորդակցվել Նրա հետ աղոթքի միջոցով: Աղոթելու ոչ մի հորդոր այնքան մեծ տպավորություն չի թողել ինձ վրա, ինչպես սիրո և թեթևության զգացումները, որոնք գալիս են խոնարհ աղոթքների պատասխանների հետ:

Մենք ստանում ենք վկայություն Աստծո ցանկացած պատվիրանի վերաբերյալ՝ պահելով այդ պատվիրանը (տես Հովհաննես Է.17): Սա ճիշտ է նաև այն պատվիրանի համար, որ մենք պետք է միշտ աղոթենք բարձրաձայն և գաղտնի: Որպես ձեր ուսուցիչ և ձեր ընկեր ես խոստանում եմ, որ Աստված կպատասխանի ձեր աղոթքներին, և որ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ձեր մեջ, որ պատասխանները Նրանից են:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

- «Նկարները արժեքավոր միջոց են դասի հիմնական միտքը ամրապնդելու համար» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում*» [1999], 176): Ցուցադրեք Ջոզեֆ Սմիթի կամ Առաջին Տեսիլքի նկարը: Քննարկեք փորձառությունը, որը Ջոզեֆ Սմիթը ունեցել է կապված աղոթքի հետ: Ինչպե՞ս ձեր աղոթքները ավելի իմաստալից կդառնան, եթե դուք պատկերացնեք «Երկնային Հորը . . . ձեզ մոտ», ինչպես անում է Նախագահ Այրինգը:
- Ինչպես խորհուրդ է տալիս Նախագահ Այրինգը, խորհեք աղոթքի մասին ձեր վկայությունը կիսելու շուրջ, քննարկելով օրհնությունները, որոնք դուք ստացել եք աղոթքի կամ աղոթքի մասին սուրբ գրություններով կիսվելու հետևանքով:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հավատքի իմ աղոթքը

Փրիսիլա Ֆարիաս Դե Լիմա

Երբ ես 18 տարեկան էի, ես աշխատում էի կահույքի խանութում որպես վաճառող: Իմ աշխատանքային գրաֆիկը շատ ծանրաբեռնված էր: Ես աշխատում էի առավոտյան ժամը 8.00-ից մինչև երեկոյան ժամը 10.00-ը, երկուշաբթիից մինչև շաբաթ: Ես տխուր էի, որովհետև հնարավորություն չունեի մասնակցելու ինստիտուտին և Եկեղեցու միջոցառումներին:

Ես սկսեցի աղոթել Երկնային Հորը մեծ հավատքով, խնդրելով Նրան օգնել ինձ գտնել աշխատանք, որտեղ ես պարտավոր չլինեի աշխատել շաբաթ օրերը, որպեսզի կարողանայի գնալ ինստիտուտ և այլ միջոցառումների:

Մի օր աշխատավայրում ես սպասարկում էի մի մարդու: Մենք սկսեցինք խոսել, և նա ասաց, որ ինքը աշխատում է մի մեծ բանկում: Ես հարցրեցի, թե ինչպես ես կարող էի տեղեկանալ այդ բիզնեսի նոր աշխատատեղերի մասին: Նա տվեց ինձ իր անունը և հեռախոսի համարը և ասաց ինձ, որ ես կարող էի զանգել կադրերի բաժին և ասել, որ ճանաչում եմ իրեն: Ես գնացի բանկ և հանձնեցի անհրաժեշտ քննությունները: Ես անցա և սկսեցի աշխատել օրը վեց ժամ՝ երկուշաբթիից ուրբաթ՝ վաստակելով նախկինից երեք անգամ ավելի:

Ես գիտեմ, որ Տերն առաջնորդում է մեզ, երբ մենք առաջնահերթություն ենք տալիս Իրեն: Նա առաջնորդում է ինձ նույնիսկ մինչև այսօր: Ես գիտեմ, որ աղոթքի սկզբունքը ճշմարիտ է:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *First Presidency Message, February 2012*-ի թարգմանությունը: Armenian: 10362 201

Օջախի պահապանները

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Հավատք, Ընտանիք. Սփոփանք

«Դուք օջախի պահապաններն եք», - ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008), ներկայացնելով «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» ուղերձը 1995թ. Սփոփող Միության գերագույն ժողովին: «Դուք եք երեխաներին լույս աշխարհ բերողները: Դուք նրանք եք, ով խնամում են նրանց և հիմնում նրանց մեջ կյանքի սովորույթները: Ոչ մի ուրիշ աշխատանք այդքան մոտ չէ աստվածայնությանը, որքան Աստծո որդիներին ու դուստրերին խնամելը»[1]:

Այժմ մոտ 17 տարի է, ինչ այս հայտարարությունը ակնառու է դարձնում, որ մեր ամենակարևոր պարտականությունները կենտրոնացված են ընտանիքները և տները ամրացնելու շուրջ՝ անկախ մեր ներկա պայմաններից: Բարբարա Թոմսոնը՝ այժմ Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդականը, Սոլթ Լեյքի Թաբերնաքլում էր, երբ Նախագահ Հինքլին առաջին անգամ կարդաց հայտարարությունը: «Դա մեծ իրադարձություն էր», - հիշում է նա: «Ես զգացի այդ ուղերձի կարևորությունը: Ես նաև մտածեցի. «Սա հիանալի ուղեցույց է ծնողների համար: Սա նաև մեծ պատասխանատվություն է ծնողների համար»: Ես մի պահ մտածեցի, որ այն իրականում ինձ չի վերաբերում, քանի, որ ես ամուսնացած չէի և երեխաներ չունեի: Սակայն հաջորդ պահին մտածեցի. «Բայց դա վերաբերում է ինձ: Ես ընտանիքի անդամ եմ: Ես դուստր եմ, քույր եմ, մորաքույր եմ, զարմուհի եմ և թոռնիկ եմ: Ես ունեմ պարտականություններ և օրհնություններ, որովհետև ես ընտանիքի անդամ եմ: Անգամ եթե ես իմ ընտանիքի միակ կենդանի անդամը լինեի, միևնույն է, Աստծո ընտանիքի անդամ եմ և պարտականություն եմ կրում մյուս ընտանիքներին օգնելու համար»»:

Բարեբախտաբար, մենք միայնակ չենք մեր ջանքերում: «Ամենամեծ օգնությունը, - ասում է Քույր Թոմսոնը, - որը մենք կարող ենք ունենալ ընտանիքները ամրացնելու հարցում, դա Քրիստոսի վարդապետություններն իմանալն է և դրանց հետևելը և ապավինելը Նրան մեզ օգնելու համար»:[2]

Մեր պատմությունից

«Երբ Քույր Բաթշեբա Վ. Սմիթը ծառայում էր որպես Սփոփող Միության չորրորդ նախագահ [1901-1910թթ.], նա զգաց ընտանիքները ամրացնելու կարիքը և հիմնեց մայրերի կրթության դասեր Սփոսփող Միության քույրերի համար: Դասերը ներառում էին խորհուրդներ ամուսնության, նախածննդյան խնամքի և երեխային խնամելու վերաբերյալ: Այս դասերը լրացրեցին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները, որոնցով Սփոփող Միությունն օգնում էր կանանց կատարել տան հետ կապված իրենց պարտականությունները.

«Երբ անտեղյակություն կամ թեկուզ հասկացողության պակաս կա ընտանիքի և ընտանեկան պարտականությունների վերաբերյալ, որոնք պետք է գոյություն ունենան և օրինականորեն գոյություն ունեն ամուսնու և կնոջ, ծնողների և երեխաների միջև, ահա այդ պահին օգնության է գալիս այդ կազմակերպությունը, և բնական օժտումների և ոգեշնչումների միջոցով այն պատարստված է և պատրաստ է ուսուցում տրամադրել այդ կարևոր պարտականությունների վերաբերյալ»»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “Stand Strong Against the Wiles of the World,” *Ensign,* Nov. 1995, 101.
2. Բարբարա Թոմսոն, «Ես կզորացնեմ քեզ, ես կօգնեմ քեզ», *Լիահոնա* և *Ensign,* նոյեմբեր 2007, 117:
3. *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 13.

Սուրբ գրություններից

Առակաց ԻԲ.6, 1 Նեփի 1.1, 2 Նեփի 25.26, Ալմա 56.46–48, Վարդապետություն և Ուխտեր 93.40

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել քույրերին, որոնց համար պատասխանատու եմ, ամրացնել ընտանիքները:

2. Ինչպե՞ս ես կարող եմ առաքինի ազդեցություն ունենալ իմ ընտանիքում:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *Visiting Teaching Message, February 2012*-ի թարգմանությունը: Armenian: 10362 201